

չարտադրէ՝ այն յաւէտ սուրբն է և առաջարկահաճոյ:

Քաղաքական օրինաց համաձայն՝ առնարգական խօսք մի բանագարիչը լուսավոր կառուժութիւն պահում է մեզանչողին՝ հոգեւոր օրէնքով իշխճը դրուած է դատաւոր . . . : Առաջնորդին զէնքն է յաւէտ քաղցրութիւն և ներողամտութիւն, բայց մայն այս աշխարհի մէջ:

Եյսափ երկար տեսութեամբ մենք ուշ զեցինք հասկացնել բարոյական գիտութեանց պարտասութական լինելուն օգուտաները կամ գոնէ աշխարհական ուսմանց հետ հաւասար կամ զուգընթաց աւանդուելուն հարկը. որպէս զեք քրիստոնէական կրօնը կարողանայ հասնել իւր փրկարար նպատակին և այլ ևս դուրս չելնեն աստուածամարտներ, նիւթապաշտներ, որ խոչնդուսն կինին ամենայն դարուց անսայթաք յառաջադիմութեանը կրօնական զարգացմանց: Քրիստոսական կրօնի ճշշմարտութեանը իւր բարոյականութեան մէջն է:

Իմ քարոզածը, սիրելի ընթերցող, նոր բան չէ, անկարելի բան ալ չէ:

Եւրոպացիք անէարելիութեան դաղափարը զերելու վրայ են քանի որ նորանոր գիւտեր կ յաճախին ի զարմանս մարդկային ազգի միւս ցեղերուն. ասոնք աշխարհական գիտութեանց արդիւնք են. ինչու կարելի պիտի չլինի նոյն հասպատամութեամբ յարած առանել բարոյական գիտութեանները և ճշգրտել այն խօսքը թէ, Ուրիշ հարդիան ի հասպատամութայն+ էն +ան պրտիս լուսոյ է-թեանց յաղածո, ի հարկէ բարին ու չարը որոշելու նկատմամբ:

Աէրը առ. Աստուած ամենայն բան կը յաջողէ, ամենայն դժուարութիւն կհար-

թէ ու կտապալէ: Խւրաքանչիւր մարդոյ սրբութիւնը անմահութիւն է մի մարդոյ նկատմամբ. ընդհանուր մարդկային ազգի ու հասպատական բարոյականութեան համայաց կենցաղականութեանը անմահութիւն է բուլոր աշխարհի համար և վերանորոգութիւն. վասն զի եթէ ըստ Աստուածաշունչ Ա. Գրոց մեր նախահայրը իւր սիրոյ պակասութեամբ զայն դարձուց յաշխարհ յառաջ և հեծութեանց, անոր սիրընդոց սիրոյ առաջ և լուսավին դարձնել ի գրանիտ գագիս-թեան, զոր առաթիւ սոյն 1876 նորոյ տարւոյս կմաղթէ իւր սիրելի համազգեաց

ՀԱՑԿՈՒԹԻՒՆ:

## ՀԱՄԱՊՈՅՈՍ ԻՄՆ ՏԵՍԱԿԹԻՒՆ

ՄԵՐ ՆԵՐԿԵՑ ԴՐՈՒԹՎԵԼՆ ԱՅԲԵՑ.

Սկզբնական գաղթականութիւնները նայելով հանգամանքներին՝ իւրաքանչիւրն յատուկ եւ առանձին կրնեալ կամ ներառիւն եւ կամ կայրենի դրութիւնք կաղմեցին հետեւեալ կերպով:

Գաղթականութեան մի մասը, որ եղանակի եւ կլիմայի բերմունքէն սախալեալ, իւր տեւողականութիւնը միայն աշխատելու մէջ գտաւ, եւ տեսաւ որ առանց հոգալոյ չէ կարող պահել իւր գոյութիւնը, սկսաւ մաքառել զանազան դրժուարութեանց գէմ, եւ սոցա յաղթելու համար պէտք եղաւ հնարքներ մտածել. որը հետզետէ յառաջեցին եւ ստացան կատարեալ կերպարանք եւ նոցա օգուտը բաղմակողմանի դարձաւ: Այս քաւական չէր, մարդիկ հարկ հա-

մարեցին մարդավայել գիւտերով իւրեանց ներկայն մխիթարական առնել եւ ապագայն փառաւորել . եւ հետզհետէ աշխատեցին արհետները կատարելագործել , դժուարութիւնները հեշտացնել եւ մտաւոր զարդացմամբ իւրեանց փառքը ապագայում ճարել : Սոքայ որ սկզբում ահ եւ սարսափ էին դժում երեւոյթներից , յաճախակի նոցա ազգեցութեան ենթարկուելով , մտածեցին պատճառը գտնել , եւ վերջապէս գիւտի յաղթանակը տանելով ուրախանում են : Սոքա տեսան որ իւրեանց բոլոր շրջապատողները միայն օգտի համար են , սկսան ուսումնասիրել . ի վերջոյ բնական հետաքրքրութեամբ բոլոր ստեղծուածքը քննութեան առան եւ ահայսօր ըստ բաւականին յաջողելով եւ հասնելով նպատակին խրախուսիւմ են : Այսպիսիները վարում են կեանք , արդիւնտոր կեանք , կեանք՝ որ գնալով ողջունում է աւելի փառաւոր ներկայ : Ահա այսպէս մի մասն ժաղագիրն դրութիւն կազմեցին բոլոր յարմարութիւններով , եւ իրաւ , սոյա ջանքն է յօդուտ ընդհանուր մարդկութեան :

Գաղթականութեան այն երկրորդ մասը , որ իւր ապրուսոր աշխատութեամբ ճարելու հարկ չըտեսաւ , եւ պէտք չըկար երկար ու բարակ մտածելու , որով հետեւ նորա չերեւակայածը ինքը կիման (եղանակն)՝ իւր ջերմութեամբ հոգում էր , սկսաւ միայն իրը զբաղմունք խաշնարածութեամբ պարապել , թափառական եւ վրանաբնակ կեանք վարելով , եւ կամնահապետական անշարժ գրութեամբ իւր սերմանած եւ Աստուծոյ խը-

նամքին ապաստան թողած արտից իւր ապրուսոր սպասելով : Սոցա փոյթը չեղաւ հեշտ եւ աւելի յաջողակ միջոցների վերայ մտածել . եւ կատարելագործուիլ սոյա գործը չէ : Սոցա իշխողն է միայն աւելորդապաշտութիւնը եւ ծուլութիւնը : Սոքա՝ որքան որ անցեալէն եւ իներկայիս նկատել կարողացած եմք՝ կտեսնեմք ո՞ր մարդկութեան ոչ մի ծառայութիւն արած են : Այսպիսիների կեանքը Հառելական անդորրանեւունիւնն է , իսկ ապագայն՝ տիսուը եւ ոչ ինչ : Եթէ կըրթուած ազգերի ձեռնտուութիւնը չառաջնորդէ նոցա դէպ ի մի որ եւ իցէ արդիւնաւոր շրջան , նոցա գոյութիւնը մի եւ նոյն անմիտար դրութեան մէջ պիտի մնայ : Ահա , թերակիրթ ազգերի դրութիւնը :

Վայրենի դրութիւնը նոքա են կազմում՝ որք հանգամանքներին չը կարողանալով դիմադարձել , կերպարանափոխ եղան կեանքի բոլոր տիպարներով եւ սովորութեամբ դէպ ի այն գաղանական դրութիւնը , որով միշտ պէտք է մաքառէին գաղանների հետ . եւ տեղական եղանակին յարմարուելով կամ հանգերձեղէնների գործածութիւնը բոլորովին մերկացան եւ Այրեցեալ Գօտուոյ կատաղի գաղաններին հաւասարեցան , որք բնականաբար աւելի կատաղի են լինում , եւ կամ կենդանեաց անհեթեթ մորթերի մէջ վաթաթուելով՝ գանդաղ եւ թշուառ էակներ գարձան , որպիսի են Սառուցեալ Գօտուոյ բնակիչները : Եւ սոքա երբէք կարող են ունենալ հասարակական կեանք , գրականութիւն եւ մտաւոր զարգացումն .

որոց դեռ թագաւորող օրէնք խակ չը կայ: Սոցա մէջ սովորական բան է տեսակակիցը կրից դոհել: Ահա վայրենի կեանքի յատկանիշը:

Համեմատելով մարդկութեան նոյն երեք տարբեր դրութիւնները, մենք բոլորովին զանազան դասակարգեր ենք տեսնում: Եւ սորա պատճառը ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ առաւելապէս տեղական հանգամանքներու եւ եղանակի աղդեցութիւնը: Վայրենին իւր գաղանական կեանքով չէ կարող հաւասարութիւն թերակրթին, եւ ոչ թերակիրթը քաղաքակրթին իւր անտարբեր՝ անշարժ՝ եւ ինչպէս սովորութիւն է ասել՝ նահապէտական դրամնետամբ. խակ քաղաքակիրթը անհամատ բարձր է բռնում: Թէ իւր հասարակական եւ անձնական գործունէութեամբ, թէ արհեստից եւ գիտութեանց վերաբերութեամբ եւ թէ կանոնաւոր գրականութեամբ:

Խօսքերս գարձնելով մեր (Հայոց) վերայ, ո՞ր կարգից համարուելու ենք, վայրենի դրութեան վերագրել մեզ՝ անհնար է. բոլորովին թերակիրթ անուանել՝ չէ կարելի. որովհետեւ մեր մէջ մի մասն բանիմաց, խորհուն եւ քաղաքակիրթ կարող է համարութիւն իւր հրատարակած օրագիրներովը, լրագիրներովը, ինքնուրոյն հեղինակութիւններովը, թարգմանական գրուածներովը՝ նա եւ ճարտար վաճառականութեամբ, արհեստագիտութեամբ եւ ընկերութիւններովը:

Եթէ վայրենի եւ թերակիրթ դրութեան մէջ չենք, ուրեմն կրթեալ աղդերի շարջում պէտք է մեզ որոնել. եւ գուցէ թէ այսպէս եւս լինէր. բայց ա-

ռածը ասում է, ոմի ձեռը ծափ չիտայ . . . որովհետեւ Հայերի մէջ կայ մի կարգ, որ ըստ ամենայնի շատ սառը վիճակումն է, այդ գիւղացին է աւելի, գիւղացին՝ որ սփռուած է Հայաստանի շատ կողմերում եւ վիճակներում: Սոցա մէջ կան այնպիսի տեղեր՝ որոց բնակիչ Հայք իւրեանց օրականը ճարելու համար թափառում են տարիներով մի քանի նշանաւոր քաղաքներում եւ նահանգներում, որը թէ որչափ տիրառիթ եւ վտանգաբեր հետեւանք ունի, կարելի է իմանալ արդէն այն տեղեկութիւնից, որ երեմն Պօլսում տեղական Աղքային վարչութեամբ վճռուել է ամեն միջոց գործ գնել պանդուխտներին իւրեանց հայրենիքը գարձնելու, գէպ ի հայրենիք, որից հեռանալով չեն կամենում վերադառնալ իւրեանց ընտանեաց թըշուառութիւնը՝ հայրենիքի խեղճութիւնը եւ այլ եւ այլ տեսակ զրկանքները չըտեսնելու համար . . . Սոքա կարեկցութեան արժանի են, որովհետեւ սոցա մէջ կան այնպիսիներ՝ որք մայրենի լեզուն անգամ չըգիտեն, ուր մնաց աղգութեան վերայ գաղափար ունենան: Զսոսա ո՞ր կարգին վերագրելու է, զսոսա՝ որք մի պաշտելի կրօն ունին, եւ որի վերայ աւելի ծանօթութիւն չունին, այլ միայն արտաքին մի քանի ծէսեր են ճանուչում եւ էականի տեղը բռնում: Զսոսա ի Հայութեան պահողն է կրօնը, որոյ ի սէր Հայ բառը դեռ յիշվում է. վերջապէս սոքա՝ որ կրօնով Հայ աղգութիւն են կազմում եւ ոչ ըստ քաղաքականին նշանակած աղգութեամբ, այս՝ սոքա թերակիրթներ են, որոնցից

կրօնը եթէ վերցրիր՝ վերցուած է Հայութիւնը:

Կրօնը, մեր աղքի այս ամենազօր եւ ազահով պահապան հրեշտակը՝ հոգւոյ ազատ դգացումը Հայաստանի շատ անկիւններում եղած Հայերի մէջ թէ ինչ դրութիւն ունի, ցանկացողը թուղթերմէ լրագիրները, կը տեսնէ թէ ինչպէս խեղճ վիճակի մէջ է ազատութեան սկատրուակով եւ բարեգործութեան դիմակով ծպտեալ բռնաբարող կաթոլիկ եւ բողքական քարոզիչների ձեռքում, այն մարդոց՝ որք լինելով կամ հարուստ ընկերութեան ներկայացուցիչներ, է որ դրամով, է որ խոստմունքով եւ է որ հայ մանկան խրեանց ցանցը ձգելու համար պատրաստած դպրոցներով՝ յանուն ընդհանուր լուսաւորութեան, եւ կամ խարդախութեան ամեն ձեւերում վարժուած անօրէնութիւնը իբրև արդարութիւն գործողների ձեռքով, օգուտ քաղելով հանգամանքներից՝ խեղճ հայերի աչքը փոշի են փչում. զնոսա աղքային եկեղեցին բաժանում են. նորա կրօնով Հայութիւնը վերայից քերթում են եւ տարօրինակ մի ճիւաղ, Հայ սովորութեամբ, Հայ լեզուով, Հայի արիւն խմնղ, Հայի տուն քանդող կաթոլիկ կամ բողքական անունով մի մարմին կանգնացնում, որը ընդունելով մի օտար աղանդ եւ կրօն՝ ուրանում է աղքութիւնը եւ խրեան կոչում է ուղղակի կամ լոռեցական: Տեսէք, ո՞րպիսի խեղճ դրութիւն է նոցա դրութիւնը, որ կարծում են կաթոլիկ կամ բողքական աղքութիւն կայ աշխարհիս վերայ. սոքաց այս, կա-

րեկցութեան արժանի թերակիրթներ են: Եւ սոցա դրութիւնը կորուստ է սպառնում ապագայում:

Դաւանափոխութիւնը քաղաքական անկախութիւն ունեցող աղքաց եւ քաղաքակիրթների համար չունի այն կորուտեր հետեւանքը ինչ որ մեր համար է: Թերակիրթ Ասիացին իւր աղքութեան յատկանիշը միմիայն կրօնն է գնում: Եւ կարող է ուրիշ կերպ անել՝ ուրիշ բոլոր կապերը կրօնի առաջ ոչ ինչ են. իսկ քաղաքականացեալ Եւրոպացին կրօնը ներքին դգացում եւ ազատ հաւատք է համարում. նորա յատկանիշը ջոկ է: Ասիացին կրօնքով է պարծենում, Եւրոպացին՝ աւելի աղքութեան անունով եւ յառաջագիտութեան մըրցանակներով: Ասիացին կրօնքը փոխելով՝ փոխուած է համարվում եւ աղքութեամբ. իսկ Եւրոպացին՝ ինչ կրօն կուզէ թուղ ընդունէ, դարձեալ նա հաւատարիմ է իւր աղքութեան եւ կոչմանը:

Հայերիս գլխաւոր ճիզը պէտք է լինի գեռ մեզ Հայութեան մէջ պահելու համար ամեն միջոց գործ գնել կրօնական գիտելիքը իւր բոլոր որբազան աւանդութիւններով մանաւանդ ժողովրդի մէջ ընդհանրացնել. Հարկաւոր է աշխատել այս կրօնական եռանդը եթէ ժողովրդեան մէջ մարած է՝ արծարծել, եթէ մեռնելու վերայ է՝ աշխատել յարուցանել: Հայերը Ասիայումն են. Ասիացւոյ ընաւորութիւն ունին. տեղիք պէտք չէ տալ դայթակութեան, այլ մանաւանդ այնպիսի միջոցների դիմելու է, որ սիրելի վնի ժո-

զովրդին : Այս կարեւորութիւնը մեր եկեղեցական նախնի սուրբ հարք շատ լաւ պայցին : Քաջ գիտենալով նա եւ թէ ինչպէս կարելի է զարթեցնել կրօնի սէրը ժողովրդեան մէջ՝ ամեն միջոց գործ դբին նորան գրաւել գէպ ի Եկեղեցին՝ գէպ ի այն տունը՝ ուր նոքա հոգեւորապէս միսիթարվելով պէտք է մայրենի լեզուի քաղցր հնչիւը լսէին, որը պիտի մատակարարէր նոցա Ամենաբարձրելոյ հոգեշահ պատուէրները : Դէպ ի Եկեղեցին, որը զարդարեցին արարտական ճոխութեամբք եւ տօնական հանգէստներով, խորհրդաւոր օրերով՝ պատշաճ ընթերցուածներով եւ ներդաշնակ հոգեղուարծ շարականներով ու մեղեղիներով, որոց տիրող զօրութիւնը արդէն յայտնի է :

Բայց այժմ Հայը ըստ բաւականին փոխուած է, նորան Հայ պահողն միայն է հետեւեալ գաղափարը, թէ «ինչպէս իմ հէրն էր, ես էլ էնպէս, ես հօրիցս լաւ չեմ» : Հայը կարող է անտարբեր մնալ գէպ ի Եկեղեցին, մանաւանդայժմ՝ երբ բարեբաղդաբար՝ շնորհիւ վեհ Կաթողիկոսի ամենայն Հայոց 8. Գէորգայ Դ. Հայկական Զայնագրութիւնը մտաւ մեր Եկեղեցւոյ մէջ, եւ պարաւորեցուցիչ դարձաւ ամենուն համար . այս գեղեցիկնպատակ է . այսուհետեւ կարող է Եկեղեցին ժողովրդեան վերայ աւելի եւ աղդու կերպով ներգործել : Զէ յափշտակիլում կանոնաւոր ընթերցուածոց իմաստով . չէ լսում Եկեղեցւոյ բեմից ոգեւորող քարոզներ հիմնուած գեղեցիկ բարոյականների եւ կենցազօգուտ խորհրդածութեանց

վերայ . . . . . : Այն ինչ կորստաբեր եւ օտարոտի սովորութիւնները որ աւուր յաճախում են : Պատկառելի եւ սուրբ ամուսնութեան խորհուրդը՝ որ մինչեւ այս վերջին ժամանակներս ունէր իւր զուտ եւ ամբիծ գրութիւնը, այժմ բոլորովին այլ նպատակի է ծառայում . առեւանգութիւն, անհարազատութիւն, բռնի ամուսնութիւն տեղի են ունենում . ամենայն տեղ գտնատ ամենայն տեղ բողոք յաճախ լրավում են, մինչեւ անգամ յուսահատ անձնասպանութիւններ են լինում : Եւ այս ինչու : Ահա թէ ինչու : Թէպէտ մեր Եկեղեցւոյ սուրբ Հարք շատ խոչեմկանոններով սահմանել են ամուսնութեան խորհուրդը, սակայն այս կանոնները ոչ եթէ իրականութիւն են ստանում, ոչ, այլ կատարվում են իրեւ արարողութիւն միայն . թէպէտ Եկեղեցին պահանջում է հարսի եւ փեսայի փոխադարձ հաւանութիւն, բայց ի տեղիս տեղիս սորան փոխարինում է հօր կամ մօր կամքը, որից ազատուելու համար՝ սիրահար սրտերը վճռում են առեւանգութիւն : Եւ եթէ այս չըյաջողեց՝ ականայ մինչեւ Եկեղեցին են գնում, ուր թէպէտ քահանայի հարցումները հաւանութեան համար կրկնվում են, սակայն այս ոչ եթէ հաւանութիւն ստանալու համար է, ոչ, այլ լոկ ծէս . թող պատակուողները բացասական պատասխան տան՝ բայց կայ մի ձեռք \*)՝ որ

(\*) Պատկի ժամանակ զիւղերում հարսի և փեսայի հիմ գնում է Եկեղեցի հարսի բարեկամներից մի կին, որը միշտ նորա մօտ է լինում պատ-

բռնի հարսի գլուխը խոնարհեցնումէ՝  
այսպիսի ամուսիններից ինչ երջանիկ  
օրեր է սպասուելու, թող ինքն ընթեր-  
ցողը եղրակացնէ: Այս անկարգութեանց  
առաջքն առնելու համար եւս Վեհ. Կա-  
թողիկոսը գարձրեց իւր խորին ուշա-  
դրութիւնը, եւ կանոնները որոշ որոշ  
կանոնական կոնդակով առաջարկեց ուր  
հարկն է, որք տպուեցան եւ Արարա-  
տում: Այսուհետեւ կը զգուշանանք ար-  
դեօք մեր քահանաները, այդ փորձը  
ցոյց կրտայ:

(Մաշեան է յետուայ)

ԵՆՈՎՔ ՍԱՐԿԱՒԱԳ ՄՈՎՍԵՍԻՍԱՆ.

## ԱԶԳԱՅԻՆ

ՆՊԱՏ Ի ՇՈՒՇԻՈՅ.

Ըուշեցի մեր սիրելի ազգայիններէն  
մի քանի անձննք ի ձեռն Արժ. Խորէն  
Վարդապետ Ստեփանէի 500 ոուրլ.  
նուիրեցին ի նպաստ Շեմարանի Մայր  
Եթուոյս:

Մեծաւ և հրապարակական շնորհա-  
կալութեամբ կգովեմք մեր բարեպաշտ  
եղբարց այսպիսի նուիրաբերութեան առ-  
թիւ յայտնած բարեզգաց եռանդը և նը-  
պատակը:

Կի ժամանակ և հարցումների ժամանակ հարսի  
զրությ միշտ վայր խոնարհեցնում. այս կինը կոչ-  
վում է հարաւայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԲՐԵԴԱՊԵՏ.

Երժ. Յովհաննէս Վարդապետ Երեմ-  
եան Տաթեու Վիճակին Փոխանորդ  
կարգեցաւ իտեղի Երժ. Ատեփան Վար-  
դապետի Մխիթարեանց, որում ուրիշ  
կարեոր պաշտօն պիտի յանձնուի:

Ի ԿԱԼԿԱԹԱՑԵ.

Ի Կալկաթայէն ստացեալ թղթակցու-  
թիւններ կհաղորդեն, որ Գեր. Գրի-  
գորիս Երբեպիսկոպոս ՞Օ. ՞Առեիրակին  
Հայոց Վիճակին Հնդկաստանի Կալկա-  
թայի Ենդղիական Գեր. Երբեպիսկոպոսի  
հետ ի միասին՝ ի 16/28 անցեալ Գեկ-  
տեմբեր ամսոյ՝ ներկայանալով Ենդղիոյ  
Գահաժաժառնդ Ելակերտ Եղուարտ մեծ  
Խշիանին՝ արժանաւոր սիրով մեծա-  
րուել է:

Կաև ի զիմաց Վեհ. Երբային Պիր-  
մահստանի երկու պատգամաւոր ի Կալ-  
կաթա եկած լինելով Ենդղիական գահա-  
ժառնդ մեծ իշխանին գալուստը շնոր-  
հաւորելոյ համար, նոքա կյայտնեն Պիր-  
մանի արբային անհամբեր սպասելը մեր  
Վեհ. Հայրապետի գրութեան համա-  
ձայն՝ նորին Պերապատուութեան ի  
Մանդալէա մայրաքաղաք գալուն, և ժա-  
մագիլ լինելով՝ Գեհ. Գրիգորիս Երբ-  
եպիսկոպոս՝ տարւոյս անցեալ Յունիվար  
ամսոյ վերջերում գէպ ի Մանդալէա  
մայրաքաղաքն ձանապարհորդելոց պատ-  
րաստուեր է: — Մանդալէա ի Կալկաթայէ-  
ց Ուանդուն՝ անտի ցԵվակամ Հավա գե-  
տոց վերայ 25 օրի չափ նաւարկելով՝ և